

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2021 թվականի ապրիլի 6-ին կայացած Գիտական Խորհրդի N 8 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 36 անդամներից 33-ը (ցուցակը կցվում է)

Օրակարգ

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքն ամփոփում /զեկ. ամբ. վարիչներ/
2. Դասախոսների որակավորման բարձրացման ընթացքը ֆակուլտետում /զեկ. Վ.Պ. Վարդանյան/
3. Ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակացույցի քննարկումն ու հաստատումը /զեկ. Վ.Պ. Վարդանյան/
4. Աշխատանքային ուսումնական պլանների կազմման ընթացքը ամփոփում /զեկ. ամբ. վարիչներ/
5. «Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի» ամփոփի վարիչի թափուր պաշտոնի մրցույթ
6. Դոցենտի կոչման շնորհում
7. Ընթացիկ հարցեր

Նիստի օրակարգը հաստատելուց հետո

1. **ՀՄԵՑԻՆ.** Սերվիսի ամբ. վարիչ դոց. Ս.Ռ. Սուվարյանի, Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամփոփի վարիչ դոց. Ա.Թ. Գրիգորյանի, Ջրաերկրաբանության և ինժեներական երկրաբանության ամբ. վարիչ պրոֆ. Ս. Հ. Հայրոյանի, Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբ. վարիչ դոց. Պ. Գ. Դավթյանի, Երկրաֆիզիկայի ամբ. վարիչ դոց. Մ. Ս. Մկրտչյանի, Ռեզիդնալ երկրաբանության և Օգտակար հանածոների հետախուզման ամբ. վարիչ դոց. Շ. Վ. Խաչատրյանի և Սոցիալ-տնտեսական աշխարհագրության

ամբ.վարիչ դոց.Վ.Վ.Գրիգորյանի, հաղորդումը **մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ**: Բոլոր ամբիոնի վարիչները նշեցին, որ թեմաները բաշխված են, չկա որևէ ուսանող ով անտեղյակ է իր թեմայից և բոլոր ուսանողները կապի մեջ են իրենց ղեկավարների հետ: Դոց.Պ.Դավթյանը նշեց, որ ուսման վարձավճարի հետ կապված բակալավրի 4-րդ կուրսի ուսանողներից մեկն ազատման դիմում է ներկայացրել: Դոց.Շ.Խաչատրյանը նշեց, որ կան խորհրդատվությունների չներկայացող ուսանողներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ. ղեկան Մ.Ա.Գրիգորյանը հորդորեց ավարտական աշխատանքների և մագիստրական թեզերի ղեկավարներին ուշադրության կենտրոնում պահել ռազմական գործողություններին մասնակցած ուսանողների աշխատանքի ընթացքը: Գրիգորյանը կրկնեց նախորդ նիստի միտքն այն մասին, որ որևէ ավարտական աշխատանքի կամ մագիստրական թեզի պաշտպանություն չի կայանալու առցանց: Համաճարակի հետ կապված մագիստրական թեզի կամ ավարտական աշխատանքի պաշտպանությանը ներկայանալու հնարավորություն չունեցող ուսանողներն իրենց աշխատանքները հնարավորություն կունենան ներկայացնելու այլ ժամանակացույցով: Հանձնարարեց անպարտաճանաչ ուսանողներին հրավիրել ղեկանատ՝ պարզելու խորհրդատվության չներկայանալու պատճառները:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

2. ԼՄԵՑԻՆ. պրոֆ.Վ.Վարդանյանի հաղորդումը **ֆակուլտետում դասախոսների որակավորման բարձրացման ընթացքի վերաբերյալ**:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

3.ԼՄԵՑԻՆ. Փոխղեկան Վ.Պ.Վարդանյանի հաղորդումը **ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակացույցի վերաբերյալ**: Նա մանրամասն ներկայացրեց ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության ժամանակացույցն ըստ մասնագիտությունների:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ներկայացված ժամանակացույցը:

4. ԼՍԵՑԻՆ. Սերվիսի ամբ.վարիչ դոց.Ս.Ռ.Սուվարյանի, Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ դոց.Ա.Թ.Գրիգորյանի, Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբ.վարիչ դոց.Պ.Գ.Դավթյանի, Ջրաերկրաբանության և ինժեներական երկրաբանության ամբ.վարիչ պրոֆ.Ս.Հ.Հայրոյանի, Երկրաֆիզիկայի ամբ.վարիչ դոց.Մ.Ս.Մկրտչյանի, Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբ.վարիչ դոց.Վ.Վ.Գրիգորյանի, Ռեզիդնալ երկրաբանության և Օգտակար հանածոների հետախուզման ամբ.վարիչ դոց.Շ.Վ.Խաչատրյանի հաղորդումը **2021/2025 ուստարվա մագիստրոսի և բակալավրի մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների** վերաբերյալ: Ելույթ ունեցողները նշեցին, որ ուսումնական պլաններն ամբողջությամբ մուտքագրված են և ներկայացվել են ռեկտորատ, իսկ 2021-2022 ուս.տարվա աշխատանքային ուսումնական պլանների վերջնական տարբերակները հնարավոր կլինի ներկայացնել ուսումնական վարչության կողմից համապատասխան ծրագրում ուսանողների թիվը ներբեռնելուց հետո միայն:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

5. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի **մանդատային հանձնաժողովի նախագահ պրոֆ.Վ.Վարդանյանի** հաղորդումը **«Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի»** ամբիոնի դոցենտ, աշխ.գիտ.թեկնածու Պետրոս Դավթյանի կողմից ներկայացված ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու դիմումի վերաբերյալ՝ ուղղված ԵՊՀ ռեկտորին: Պրոֆ.Վ.Պ.Վարդանյանը նշեց, որ Պ.Դավթյանի գիտամանկավարժական և ամբիոնում ծավալած գործունեությունը, աշխատանքային ստաժն ու ներկայացված փաստաթղթերը բավարարում են ԵՊՀ-ում գործող կանոնակարգի պահանջներին՝ ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնելուն:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Դոց.դոց.Մ.Գրիգորյանը, Ա.Գրիգորյանը, Ս.Սուվարյանը, Վ.Գրիգորյանը և պրոֆ. Վ.Վարդանյանը: Իրենց խոսքում բոլոր ելույթ ունեցողները նշեցին, որ ամբիոնի վարիչի պաշտոնավարման ընթացքում Պ.Դավթյանը վայելել է բարձր հեղինակություն թե՛ ամբիոնում և թե՛ ֆակուլտետում: Պ.Դավթյանի պաշտոնավարման ընթացքում Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնը ձեռք է բերել լուրջ հաջողություններ ինչպես կրթական, այնպես էլ գիտական ոլորտում: Պաշտոնավարման ամբողջ ընթացքում Պետրոս Դավթյանը ցուցաբերել է աշխատասիրության և բանիմացության բարձր մակարդակ, սրտացավ մոտեցում մասնագիտական որակ ապահովելու հարցում: Ելույթներում կոչ արվեց ձայն տալ ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում Պ.Դավթյանի ընտրությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ դոց.Արսեն Թորգոմի Գրիգորյան, անդամներ՝ դոց.դոց.Ակսել Հարությունի Պոտոսյան, Սարգիս Սամվելի Քելյան:

ԼՍԵՑԻՆ. Հաշվիչ հանձնաժողովի նախագահ դոց.Արսեն Թորգոմի Գրիգորյանի հաղորդումը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ:

Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 36 անդամներից ներկա էին 33 անդամ, քվեարկության մասնակցել են 33-ը:

«Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի» ամբիոնի վարիչի պաշտոնում Պետրոս Գարուշի Դավթյանի ընտրվելուն կողմ են քվեարկել 33-ը, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ և հաստատել դոց.Պետրոս Գարուշի Դավթյանին **«Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի»** ամբիոնի վարիչի պաշտոնում:

Որոշումն ընդունվեց միաձայն:

6. *ԼՍԵՑԻՆ.* Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ պրոֆ.Վ.Վարդանյանի հաղորդումը Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի ասիստենտ, տնտեսագիտական գիտությունների թեկնածու Աշխեն Հայկի Հովհաննիսյանի դոցենտի կոչում ստանալու դիմումի վերաբերյալ՝ ուղղված ԵՊՀ ռեկտորին: Պրոֆ.Վարդանյանը նշեց, որ Ա.Հովհաննիսյանի գիտամանկավարժական գործունեությունը, աշխատանքային ստաժն ու ներկայացված փաստաթղթերը բավարարում են դոցենտի կոչում ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Մրցութային հանձնաժողովը որոշել է հարգել Ա.Հ.Հովհաննիսյանի դիմումը և միջնորդում է ֆակուլտետի գիտական խորհրդին այն դնել քննարկման:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. պրոֆ.Վ.Պ.Վարդանյանը, դոց.Մ.Ա.Գրիգորյանը: Նրանք բարձր գնահատելով Ա.Հովհաննիսյանի գիտամանկավարժական գործունեությունը ֆակուլտետում, գտնում են, որ նա արժանի է դոցենտի կոչում ստանալու և առաջարկեցին հարցը դնել փակ (գաղտնի) քվեարկության:

Փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ դոց.Արսեն Թորգոմի Գրիգորյան, անդամներ՝ դոց.դոց.Ակսել Հարությունի Պոտոսյան, Սարգիս Սամվելի Քելյան:

ԼՍԵՑԻՆ. Հաշվիչ հանձնաժողովի նախագահ դոց.Արսեն Թորգոմի Գրիգորյանի հաղորդումը փակ (գաղտնի) քվեարկության անցկացման արդյունքների վերաբերյալ, ըստ որի, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 36 անդամներից քվեարկության մասնակցել են 33-ը: Աշխեն Հովհաննիսյանին դոցենտի կոչում շնորհելու համար կողմ են քվեարկել 33-ը, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ և Աշխեն Հայկի Հովհաննիսյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

Որոշումն ընդունվեց միաձայն

7. Ընթացիկ հարցեր

7.1 ԼՍԵՑԻՆ. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ դոց.Ա.Թ.Գրիգորյանի հաղորդումը ՀԱԱՀ Հ.Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի Գիտական Կենտրոն մասնաճյուղի ավագ գիտաշխատող Սամվել Զալիբեկի Կրոյանի դոկտորական ատենախոսության թեմայի փոփոխման հարցի վերաբերյալ: Ա.Գրիգորյանը նշեց, որ հեղինակի կողմից կատարվել են կառուցվածքային դրական փոփոխություններ և առաջարկեց նախկին «ՀՀ հողերի գենետիկական և ագրոարտադրական հատկությունները կլիմայի փոփոխության և անապատացման պայմաններում» վերնագրի փոխարեն դոկտորական ատենախոսության թեման հաստատել «Անթրոպոգեն գործոնի ազդեցությունը ՀՀ հողերի հատկությունների վրա» վերնագրով:

ՈՐՈՇԵՑԻՆ. ՀԱԱՀ Հ.Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի Գիտական Կենտրոն մասնաճյուղի ավագ գիտաշխատող Սամվել Զալիբեկի Կրոյանի դոկտորական ատենախոսության թեման հաստատել «Անթրոպոգեն գործոնի ազդեցությունը ՀՀ հողերի հատկությունների վրա» վերնագրով:

Խորհրդի նախագահ՝

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար՝

Ե.Ս.Մանուկյան